

Հավելված
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
07.05.2015թ. թիվ 97-Լ որոշման

ՀՀ փաստաբանների պալատի նախագահ՝

_____ **Արա Զոհրաբյան**

ԱՌՑԱՆՑ ՁԵՎՈՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

ԿԱՐԳ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածին և Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ հաստատված Փաստաբանների վերապատրաստման կարգի 12-րդ կետին համապատասխան, սույն կարգով սահմանվում է առցանց (**այսուհետ՝ Առցանց**) ձևով վերապատրաստում իրականացնելու հետ կապված հարաբերությունները:

1.2 Վերապատրաստման լրացուցիչ դասընթացներին փաստաբանները չեն կարող մասնակցել Առցանց:

1.3 Առցանց վերապատրաստմանը փաստաբանի կողմից մասնակցությունը հաշվարկվում է պարտադիր վերապատրաստման ժամ, ոչ ավել մեկ կիսամյակի համար 4 (չորս) ակադեմիական ժամից:

2. Առցանց վերապատրաստման կարգը

2.1 Առցանց վերապատրաստումն իրականացվում է նախապես տեսաձայնագրված դասը դիտելու միջոցով:

2.2 Առցանց վերապատրաստման յուրաքանչյուր դաս բաղկացած է առնվազն մեկ ակադեմիական ժամից և չի կարող գերազանցել չորս ակադեմիական ժամը:

2.3 Փաստաբանի կողմից Առցանց վերապատրաստման ժամերը հաշվարկվում են որպես պարտադիր վերապատրաստման ժամեր վերապատրաստումն իրականացնող կազմակերպության կողմից Պալատին համապատասխան տեղեկանք ներկայացնելու դեպքում, բացառությամբ այն դեպքերի, երբ առցանց վերապատրաստումն իրականացվում է Պալատի կողմից:

3. Առցանց վերապատրաստման առանձնահատկությունները

3.1 Առցանց վերապատրաստման դասընթացը Պալատի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանական դպրոց» հիմնադրամի, ինչպես նաև Պալատի խորհրդի կողմից հավատարմագրված կազմակերպության կողմից նախապես տեսաձայնագրված դասընթաց է, որը ներառում է նաև power point ձևաչափով կազմված նյութեր և թեստեր:

3.2 Փաստաբաններն Առցանց վերապատրաստմանը մասնակցելու համար համակարգ են մուտք անում իրենց արտոնագրի համարը, անուն, ազգանունը և էլեկտրոնային փոստի հասցեն:

3.3 Դասընթացին մասնակցելու համար փաստաբանը լրացնում է համապատասխան թեսթ, համակարգը հաշվում է թեսթի արդյունքը, որը երևում է էկրանին, և պահվում տվյալների բազայում:

3.4 Տեսաձայնագրված դասընթացը յուրաքանչյուր 10-15 րոպեն մեկ անգամ ընդհատվում է թվաբանական կամ թեսթային հարցերով: Հարցերին ճիշտ պատասխան տալուց հետո է դասընթացը շարունակվում, հարցերի սխալ պատասխանի դեպքում դասընթացն ընդհատվում է, իսկ փաստաբանը համարվում է Առցանց վերապատրաստմանը չմասնակցած:

3.5 Դասընթացն ավարտվելուց հետո փաստաբանը կրկին թեսթ է լրացնում, որի դրական պատասխանի դեպքում համակարգը փաստաբանի տվյալներն ուղարկում է տվյալների բազա, ինչը հնարավորություն է ընձեռում հաշվարկել փաստաբանի մասնակցությունը Առցանց դասընթացին՝ որպես պարտադիր վերապատրաստման ժամ: Թեսթի բացասական պատասխանի դեպքում փաստաբանի Առցանց վերապատրաստման ժամերը չեն հաշվարկվում:

3.6 Սույն կարգն ուժի մեջ է մտնում 2015թ. մայիսի 15-ից: